Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 19

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ա. Զաքարյանը, Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Մ. Տաշչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը և Շ. Վահանյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի հմ. 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Մ. Յաշչյան/

5. Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 7-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Մ. Յաշչյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

8. Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

13. Հայաստանի Հանրապետության Աշտարակ համայնքի ավագանու 21.12.2017թ. N 12-Ա որոշման փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

14. Վարազդատ Ամիրյանին հողամաս նվիրաբերելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 10 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Ներկայացրեց Աշտարակ համայնքի 2018թ. բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Սարիբեկ Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Ներկայացրեց Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին համայնքի ավագանու որոշման նախագիծը: Վահանյանը նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվել դիմումները բազմակողմանի ուսումնասիրելուց և նախնական քննարկումից հետո:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Ա. Զաքարյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 4 - *Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի հմ. 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց համայնքի ավագանու 15.11.2017թ. թիվ 4-Ա որոշման հավելված 1/2-ը՝ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծառայությունների դիմաց սահմանված փոխհատուցման վճարների մասին, ընդունել նոր խմբագրությամբ:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Մ. Տաշչյանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը, իսկ բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 5 - *Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 7-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Օրակարգի հաջորդ հարցը ևս զեկուցեց Ս. Սահակյանը և առաջարկեց կատարել փոփոխություններ և լրացումներ Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 7-Ա որոշման մեջ՝ համաձայն ներկայացված հավելվածի:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը և Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 6 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասերի, որոնք գտնվում են ՖՀԻ Գիտավան թաղամասում, Քասախի կիրճի հարակից տարածքում, Ն. Աշտարակեցու փողոցում, տրամադրել կառուցապատման իրավունքով, ինչպես նաև մրցույթի համար սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Մ. Տաշչյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, որոնց համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 7 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Արմեն Մնացականյանը և առաջարկեց հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 042-007 ծածկագով 0.01656 մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 55 տոկոսը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Մ. Տաշչյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը:

Հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց և բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տվեց նաև համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն – 8 - *Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց Ա. Մնացականյանը և նշեց, որ նախագծում նշված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատարածքը ՀՀ կառավարության 07.09.2006թ. թիվ 1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս է մնացել, սակայն ճշգրտման արդյունքում պարզվել է, որ վերը նշված հողատարածքը իրականում հանդիսանում է համայնքային սեփականություն, ուստի հաշվի առնելով այդ հանգամանքը առաջարկվում է հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ դրանից 80քմ հողամաս աճուրդ-վաճառքով օտարել:

Նախագծում նշված հողատարածքի գտնվելու վերաբերյալ հարց ուղղեց Ս. Օվոյանը, որին զեկուցողի կողմից տրվեց սպառիչ պատասխան:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն – 9 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության Աշտարակ համայնքի Թորամանյան, Ն. Աշտարակեցու և Տիգրան Մեծի փողոցներում գտնվող հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու համար:

Միաժամանակ առաջարկեց հաստատել նշված հողամասերի վաճառքի մեկնարկային գները:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն – 10 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը զեկուցեց Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել,

1. Աշտարակ քաղաքի Սաժումյան փողոց, N2 հասցեում գտնվող բնակելի տան ճակատի վերակառուցման և կցակառույցի իրականացման համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Սարգիս Ղույումչյանին վերը նշված բնակելի տանը կից՝ 167-001 և 167-018 ծածկագրերից 50քմ հողամասը տրամադրելու 50 տարի ժամկետով՝ տարեկան 3500 /երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ վճարով:

2. Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոց, N27/2 հասցեում գտնվող, կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի ընդլայնման նպատակով, կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Արտավազդ Աբրահամյանին վերը նշված հողամասին կից՝ 843-001 ծածկագրից 14,2քմ հողամասը տրամադրելու 20 տարի ժամկետով՝ տարեկան 14200 /տասնչորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ վճարով:

3. Աշտարակ քաղաքի Ալազանի փողոց, N11/1 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման և սպասարկման նպատակով, օժանդակ շինություններ կառուցելու համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Ռաֆֆի Գապագեանին վերը նշված հողամասի հարևանությամբ՝ 861-001 ծածկագրից 145քմ հողամասը տրամադրելու 50 տարի ժամկետով՝ տարեկան 14500 /տասնչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ վճարով:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը, Մ. Տաշչյանը, Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն – 11 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Ա. Մնացականյանը և առաջարկեց Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող 603-014 ծածկագրով 0,2865հա, 815-062 ծածկագրից 0,3523հա, 839-011 ծածկագրով 0,2319հա, 815-063 ծածկագրով 0,363հա, 815-041 ծածկագրով 0,739հա, 815-042 ծածկագրով 0,2237հա, 827-111 ծածկագրով 0,5412հա, 815-083 ծածկագրով 0,2462հա և 815-084 ծածկագրով 0,2278հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու մասին՝ մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 100%-ը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ աճուրդ-վաճառքի ներկայացվող հողակտորները հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության և գտնվում են Աշտարակ քաղաքի <<Արայի>> տեղամասում:

Հարցի շուրջ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում որոշումն ընդունվեց միաձայն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակ համայնքի ավագանու 21.12.2017թ. N 12-Ա որոշման փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Արմեն Մնացականյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի ավագանու 21.12.2017թ. N12-Ա որոշման մեջ, մասնավորապես, վերնագրում, իսկ նշված որոշման 1-ին կետն ընդունել նոր խմբագրությամբ:

Հարցի շուրջ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում որոշումն ընդունվեց միաձայն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Վարազդատ Ամիրյանին հողամաս նվիրաբերելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի <<Արա-2>> թաղամաս, 5-րդ փողոց N 32 հասցեում գտնվող, 02-001-0407-0021 ծածկագրով 600քմ համայնքային սեփականություն հանդիսացող տնամերձ հողամասը բնակելի տուն կառուցելու նպատակով Վարազդատ Համբարձումի Ամիրյանին նվիրաբերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Սարգսյանը, Մ. Տաշչյանը, Հ. Վարդանյանը:

Համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի կողմից հարցի շուրջ տրվեցին լրացուցիչ պարզաբանումներ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2018 թվականի օգոստոսի 2-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ